

Համաշխարհային տնտեսությունը թեւակոխել է գլոբալ զարգացման ժամանակաշրջան: Գլոբալացումը սկիզբ է առել անցյալ դարի 60-ական թվականներից և այսօր մեծ ծավալում է գտել ոչ միայն տնտեսության, այլ նաեւ սոցիալական ու քաղաքական ոլորտներում: Բնական է, որ համաշխարհային տնտեսության գլոբալ զարգացումն իր հիմքում ունի երկրների ազգային տնտեսությունների փոխադարձ կապերն ու պայմանավորվածությունները: Գլոբալացման կարեւոր պատճառներից կարելի է համարել համամոլորակային առումով շուկայական տնտեսության և ազատ առեւտրի համակարգի նկատմամբ գլոբալ միակարծության ձեւավորումը:

Փոքր և աղքատ երկրի համար, ինչպիսին Հայաստանն է, սեփական ուժերին ապավինելու սկզբունքը (երբ անհնար է ոչ միայն ազդել աշխարհում տեղի ունեցող գործընթացների վրա, այլև հուսալիորեն կանխատեսել դրանք), ռազմավարական նպատակներին չհասնելու մեծ հավանականություն է ստեղծում: Սա բազմիցս ապացուցվել է միջազգային փորձով:

Հայաստանի Հանրապետությունը, հաշվի առնելով միջազգային ասպարեզում գլոբալ ինտեգրացիոն տեղաշարժերը, պետք է հնավորության սահմաններում մասնակից լինի այդ գործընթացներին՝ ուղեցույց ընդունելով ինտեգրացիան, որը մեր հանրապետության համար ունի ռազմավարական նշանակություն:

Գոյություն ունեն բազմաթիվ հիմքեր՝ հաստատելու, որ գլոբալացման ու ինտեգրման գործընթացները որքան խորանում են, այնքան մեծ շարժունակություն են ձեռք բերում մարդկային կապիտալի հոսքերը:

Միգրացիայի ծավալներն այնպիսին են, որ այն բացի «ուղեղների արտահոսքից», չի կարելի դիտարկել որպես համաշխարհային տնտեսության հետ ինտեգրման բնութագրիչ հատկանիշ: Հայաստանում ինտեգրման հետք այս բաղադրիչը (ամենայն հավանականությամբ), առավել կարեւոր է, քանի որ աշխարհով մեկ սփռված Սփյուռքի առկայությունը ինտեգրումը մեր երկրի համար դարձնում է հիմնախնդիր: Մյուս կողմից, համաշխարհային տնտեսությանը Հայաստանի ինտեգրման գործընթացի կարեւոր բնութագրիչն է վերազգային ընկերությունների ներթափանցումը Հայաստան, որոնց առկայությունը մեծամասամբ փոխում է զարգացման ճեղքվածքի արագացված հարթահարումը: Այնպես է, որ ընդհանուր առմամբ՝ Հայաստան վերազգային ընկերությունների ներգրավման հաջող իրագործումից է կախված տնտեսական զարգացման հաջողությունը:

Վերազգային կառուցվածքների ինտեգրումը օգնում է չեզոքացնել ներքին շուկաների սահմանափակության գործոնը, մեծացնում է ներմուծման ու գիտելիքի, ինչպես նաեւ տեխնոլոգիաների օգտագործման հնարավորությունները: Այդպիսով մեծանում են նաեւ սեփական մրցունակ գիտելիքի ու տեխնոլոգիաների արտադրության հնարավորությունները:

Հաջողությունները մեծ են ինտեգրացիոն այնպիսի կառուցվածքներում, որտեղ միավորված են կա՛մ զարգացած երկրները, կա՛մ երկրներն ինտեգրված են թույլ զարգացած երկրների հետ մեկտեղ: Փորձը նաեւ ցույց է տալիս, որ միայն թույլ զարգացած

երկրների ինտեգրումը չի տալիս շոշափելի արդյունքներ: Սա բացատրվում է այն հանգամանքով, որ այս դեպքում բացակայում է գիտելիքի ու տեխնոլոգիաների և արտադրության առաջավոր կապիտալի տարածման էֆեկտը, որոնց հիմնական կրողները զարգացած երկրներն են: Արդյունավետ ինտեգրման համար անհրաժեշտ է նաեւ երկրներից որեւէ մեկի ճնշող առավելություն: Սակայն այս դեպքում մնացած երկրները գրկված են որոշումների ընդունման վրա արդյունավետ ազդեցության մեխանիզմների կիրառումից, եթե նույնիսկ այդպիսի մեխանիզմները նախատեսված են ինտեգրացիոն կառուցվածքներում:

Իմպերիալիզմի տեսության հիմնական դրույթն այն է, որ զարգացած երկրների կողմից մնացած աշխարհի գաղութացումը, գաղութատիրության վերացումից հետո, շարունակվում է ոչ միայն տնտեսական, այլև մշակութային ասպարեզում, որ ոչ արեւմտյան մշակույթները վտանգված են արեւմտյան մշակութային արդյունաբերության համատարածությամբ: Այստեղ սկզբունքային գործոնների թվում են հաղորդակցության և տեղեկատվության ժամանակակից տեխնոլոգիաները: Որտեղ թերեւս կա մտավախություն, թե արդյոք գլոբալացումը չի ծնում վտանգ մշակութային ինքնության համար, արդյոք գլոբալացման դարաշրջանում ազգային պետությունը զգալիորեն չի կորցնում իր իշխանությունը, և արդյոք չի դժվարանում ազգային մշակութային ինքնության պաշտպանությունը, այն դեպքում, երբ անդրազգային կապիտալը տնօրինում է աղքատ երկրների բախտը:

Եթե ելնենք այն դրույթից, որ գլոբալացման եռթյունը ոչ միայն շուկաների, այլև արժեքների մրցակցություն է, ապա հայ ազգը քաղաքակրթական արժեքների պահպանման մեջ ունեցել է որոշակի ավանդ: Դա պարտավորեցնում է կարեւորել այդ գործում ՀՀ ներկա և ապագա մասնակցությունը՝ վերահաստատելով առաջավոր աշխարհին ինտեգրվածության հակումը, այն երկրի զարգացման ծանրակշիռ գործոն դարձնելու ունակությունը և միաժամանակ՝ ինքնության պահպանման կարողությունը: Ուստի՝ հարցը, թե ինչ կամ ինչպիսի մշակույթ և մշակութային ինքնություն է հնարավոր հետխորհրդային Հայաստանում, մնում է կենսականորեն սկզբունքային և առաջմ անպատասխան: Եթե համաձայն ենք, որ ինքնությունը ձեւավորվում է արտահայտվում է մշակութային ներկայացման մեջ և միջոցով, ապա ինքնության ճգնաժամը ուղղակիորեն առնչվում է ներկայացման դժվարություններին նույնպես: Մշակութային ինքնության վերջին ասպատակը լեզուն է, ուստի՝ անհրաժեշտ է փնտրել մշակութային իրադրության համար պատշաճ լեզու:

Հաճախ շահարկվում է «ազգային արժեք» արտահայտությունը, սակայն այն մշակութային աղետը, որը ակնհայտ շոշափելի է մեր օրերում, առհասարակ հարցականի տակ է դնում ներքին ինտեգրացիայի, այդ թվում նաեւ տեսակի պահպանման խնդիրը: Հայ մշակույթի ներկա կեցության և հեռանկարի դիտարկման համար արդարացված կլինի, եթե գլոբալացումը և տեղեկատվական հեղափոխությունը ներկայացվեն որպես մշակույթների լինելություն: Այստեղ թերեւս խնդիրը մշակութային արժեքների պահպանելությունն է, որը բավական պայմանական է: Տասնամյակներ շարունակ ԽՍՀՄ-ում քարոզվող ազգային նիհիլիզմը «կեղծ» գիտություն

# ԻՆՏԵԳՐԱՅԻՈՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԳԼՈԲԱԼ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆԱՅՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Անուշ  
ԽԱՆԴԱՄԻՐՅԱՆ  
ԵՊՀ տնտեսագիտության  
տեսության  
ամբիոնի  
դասախոս



եր համարում ազգային հոգեբանությունը: Մինչդեռ ճապոնիայում տեղի ժողովրդի հոգեբանական ավանդույթների ու յուրահատկությունների, «համայնական» ոգու ուսումնասիրումը նպաստում է այդ երկրի գիտատեխնիկական առաջընթացին:

Ցանկացած երկրի տնտեսության զարգացման նախապայմանը գիտատեխնիկական առաջադիմությունն է այն արտադրական ճյուղերում, որոնք առավել կարելի էր վերականգնել և տվյալ երկրի տնտեսական աճի խթանման տեսանկյունից: Ներկա պահին միջազգային շուկաների համար կարելի էր նշանակություն ունեն ոչ միայն հումքային պաշարները, այլ նաև ինտելեկտուալ ռեսուրսները: Գիտատեխնիկական առաջադիմության հետ մեկտեղ, հնարավոր է նորոգել և յուրովի ներկայացնել մշակութային այն արժեքները, որոնք մեզ են փոխանցվել դարեր առաջ:

Յուրաքանչյուր ժողովրդի արհեստների ու դրանց զարգացման ուսումնասիրությունը կարելի էր տեղ է գրավում նրա իսկ նյութական մշակույթի պատմության մեջ: Հայ ժողովրդի կիրառական արվեստում առանձնահատուկ տեղ ունեն ոսկերչությունը, գորգագործությունը, որոնց ակունքները խոր հնադարում են: Ասկայն մուտքը նոր հազարամյակ համընկնում է հասարակական կեցության եղանակի արմատական փոփոխության հետ: Ուստի՝ նոր դարաշրջանի խոստումները նույնը չեն ամենուր, հարկ է ունենալ իրական ակնկալիքներ և խնդիրներ՝ տեսնելու մատչելի հեռանկարներ, ձեռնկերպելու պատշաճ ծրագրեր և քաղաքականություններ: Մշակույթի տեխնոլոգիականացման ընդհանուր ընթացքը վերջիվերջո հանգեցնելու է մշակույթի աստիճանական փոփոխության, որը մի կողմից մշակույթի տազնապահ կշան է, մյուս կողմից՝ մշակութային գործունեության տարբեր տիրույթներում տեխնոլոգիայի ներկայությունն է նյութականացում և իմաստավորումը մեկնաբանելու խնդիր: Այս ամենը հանգեցնում է հստակ եզրակացության, որ ազգային ինքնագիտակության համակարգում պետք է մշտապես ընդգծվեն ազգային շահերը, որոնք անմիջականորեն խթանում են մարդկանց գործունեությունը: Ներկա փուլում անհրաժեշտ է պետության միջամտությունը՝ ել՝ որպես խոշոր սեփականատիրոջ, ել՝ որպես ազգային շահեր արտահայտողի:

Նոր տեխնիկայի ու տեխնոլոգիայի ներդրման համար հատկացվող միջոցների առավել արդյունավետ օգտագործումը կավագույն որոշումների ընդունումն է: Այս պարագայում մտավոր կապիտալը ավելի ու ավելի է դառնում անմիջական արտադրողական ուժ: Այս գերիներդի իրականացումը վերստին ենթադրում է «վերականգնողական» կամ այսպես կոչված՝ ինտելեկտուալ տնտեսությունից անցում «նորամուծական» (ինովացիոն) տիպի տնտեսության: Ընդ որում՝ գլոբալացման պայմաններում ավելացված արժեքի արտադրությունը ավելի ու ավելի մեծ չափերով կենտրոնանում է այն միջազգային վերարտադրական շղթաներում, որոնք օժտված են յուրահատուկ տեխնոլոգիական, մարքեթինգային և կառավարչական գիտելիքի հավաքակազմով: Հենց այդ օղակներն են ապահովում գիտելիքի «արտադրության» և տարածման հատվածի՝ «նոր տնտեսության» և տնտեսության ավանդական հատվածների միջև օրգանական կապը: Այդ առումով անհրաժեշտ է մարդկային կապիտալի, այսինքն՝ բարձրորակ մասնագետների և գիտական մեծ ներուժի ճիշտ ու նպատակային ձեռավորումը:

Պետությունը նաև պետք է տնտեսական լծակներով խթանի տեխնիկական առաջընթացը, ապահովի նորամուծությունների կիրառումը, նորարարների շահերի պաշտպանությունը:

Վերջապես՝ հստակ ռազմավարություններ են քաղաքականություններ են պահանջվում տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաները երկրի սոցիալական ու տնտեսական զարգացմանը ծառայեցնելու համար, որի դեպքում մարդկային և տեխնոլոգիական կարողությունների մեջ կատարվող սահմանափակ ներդրումը կարող է ունենալ զարգացման նպատակներին ծառայող տեսական խթանիչ ազդեցություն:

Վերոնշյալը հանգեցնում է այն մտքին, որ միայն տեխնոլոգիական ազդեցության և մշակութային նոր իրադրության մարտահրավերներն ընդունելու և փոխակերպելու ունակությունը մշակութային կտա վերապրելու և աշխարհին նորովի ներկայանալու հնարավորություն:

Փաստորեն՝ տեխնիկական կատարելագործման տարբերակները բավական շատ են, ինչը կախված է գործադրվելիք նոր մեթոդների և տեխնոլոգիական գործընթացների ընտրությունից, դրանց կատարելությունից աստիճանից:

Միջազգային տնտեսական հարաբերություններում մտավոր սեփականության արդյունքները, փաստորեն, անուղղակիորեն ներառվում են տեխնոլոգիական արտագործումների մեջ ու այդպես

ապահովում դրանց սեփականատերերի հավելյալ եկամուտները: Ստացվում է՝ որքան մեծ է այս կամ այն ընկերության կամ երկրի վաճառված ապրանքի գիտատարության բաղադրիչը, այնքան մեծ մասնաբաժնի կարող են հավակնել նրանք՝ ընդհանուր եկամտի բաշխման գործընթացում: Ներկայում տարբեր երկրների տնտեսությունների գիտատարության մակարդակների համադրումը՝ մի շարք անուղղակի ցուցանիշների միջոցով, ցույց է տալիս, որ որքան մեծ է տվյալ երկրի համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) գիտատեխնիկական բաղադրիչը, այնքան մեծ մասնաբաժնի ունի տվյալ երկիրը համաշխարհային ՀՆԱ-ի մեջ: Միջազգային համադրումների պրակտիկայում վերոնշյալ նպատակով սովորաբար օգտագործում են մոտ երկու տասնյակ ցուցանիշներ, որոնց միջոցով որոշվում է այս կամ այն երկրի տնտեսության տեխնոլոգիատարության կամ գիտատարության աստիճանը: Այս պայմաններում, բնականաբար, յուրաքանչյուր երկիր պետք է կառուցի իր «ազգային ռազմավարական» զարգացման համադրույթը (դոկտրինը)՝ ելնելով սկզբունքային մի շարք նկատառումներից: Նախ՝ պետք է նկատի ունենալ, որ ժամանակակից աշխարհում սկզբունքորեն վերանում են ներքին և արտաքին քաղաքականությունների, ներքին և արտաքին շուկաների միջև սահմանները, միաժամանակ՝ քաղաքական խնդիրները լուծվում են առավելապես տնտեսական միջոցներով ու մեթոդներով:

Անցումային տնտեսությամբ երկրների խիստ անկատար ինստիտուցիոնալ համակարգի առկայությունը, ինչը տնտեսության մասնավոր հատվածում խոչնդոտում է միջազգային չափանիշներով մրցունակ տեխնոլոգիաների արմատավորումը, անհրաժեշտություն է դարձնում պետության համարժեք միջամտությունը ինովացիոն գործընթացներին: Դա հատկապես վերաբերում է նոր շուկաներ մուտքի ծախսերի կրճատման, ինչպես նաև ներդրումային նոր նախագծերի իրագործման հետ կապված ռիսկերի նվազեցման գործընթացներին:

Սովորաբար՝ մասնավոր բիզնեսը, անկախ չափերից, այդ իրավիճակների հետ կապված ռիսկերը դիտում է իբրև չափազանց բարձր և խոսափում է նման նախագծերում արվող ներդրումներից: Այս պայմաններում պետությունը պետք է պատրաստ լինի ստանձնել այդ ռիսկերի որոշակի մասը:

Ներկա զարգացումները նաև վկայում են, որ ավելի թույլ և աղքատ երկրների համար հիմնական խնդիրը, ոչ այնքան համաշխարհային տնտեսությանը ամեն գնով ինտեգրվելն է, որքան դրա այնպիսի տարբերակի ընտրությունը, ինչը կապահովի նրանցից յուրաքանչյուրի բնակչության եկամուտների ինչպես հարաբերական, այնպես էլ բացարձակ ցուցանիշների կայուն աճը: Այլ կերպ ասած՝ անցումային երկրների համար ընդունելի պետք է դիտվի ինտեգրման միայն այնպիսի տարբերակը, որը կապահովի բնակչության կենսամակարդակի անշեղ աճ՝ ի հաշիվ համաշխարհային եկամտից ավելի ու ավելի մեծ մասնաբաժնի կորզելու, հակառակ պարագայում գլոբալացման ազդեցությունները տվյալ երկրի համար կլինեն բացասական, քանզի հումքային կամ մարդկային կցորդի վերածվելու հավանականությունը այդ դեպքում շատ է մեծանում:

Արդի գլոբալացման իրողությունների պայմաններում, փաստորեն, զարգացումը վերածվում է միայն զարգացած երկրների բացառիկ իրավունքի: Այս ընթացքը կարելի է բնութագրել իբրև հարուստ երկրների փոքրամասնության զարգացում՝ աղքատ մեծամասնության քայքայման հաշվին: Այս պայմաններում այսպես կոչված «անցումային» փուլում գտնվող երկրների կարգավիճակը դառնում է ավելի անորոշ:

Ազգայինը եղել է մտում է որպես քաղաքակրթության ու համակարգերի ստեղծման տարրերից մեկը: Նույնիսկ տնտեսության, մշակույթի ավանդույթների և սովորությունների աննախադեպ ինտերնացիոնալացման մեր դարում ազգայինը շարունակում է հսկայական կենարար աղբյուր լինել համամարդկային արժեքների ստեղծման գործում: Բոլոր դեպքերում, քաղաքակրթության զարգացման ժամանակակից մակարդակում խոսք պետք է լինի ազգային պոտենցիալ հնարավորությունների զարգացման ու համամարդկային մշակույթ նրա ներառման մասին: Այս համամասնությամբ ազգի համար, որը ձեռք է բերել հոգեւոր աշխարհի և անհատականություն ու հիշողություն, անչափ մեծ է ձեռքբերումը պահպանելու բնագրը:

Ինչ վերաբերում է ինտեգրմանը, դա միանգամայն բնական օրինաչափություն է՝ պայմանավորված տնտեսական ու հոգեւոր զարգացման անհրաժեշտությամբ, որը բնավ միտված չէ ազգերի ձուլման գաղափարին: